ԳՐԱԼԽՕԱՍՈՒԹԻՆ. ԱՂՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՆ

ՀԱՅՐԵՆԱԳԵՏԻ ԳԻՐՔ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆԸ

Նախիջեւանի երկրամասը, որ ներկայումս կրում է «Ինքնավար հանրապետություն» շինծու անունը, հնուց ի վեր եղել է պատմական Հայաստանի անբաժան մասը: Դեռեւս Ք. ա. Թ դարից մինչեւ մ. թ. Ե դարը նրա տարածքը գտնվել է Արարատյան թագավորության, ապա Երվանդունիների, Արտաշեսյանների եւ Արշակունիների հայկական թագավորությունների կազմում՝ իր մեջ ընդգրկելով Այրարատ աշխարհի Շարուր, Սյունիքի նահանգի Ճահուկ, Երնջակ, Շահապոնք եւ մասամբ Գովսական, Վասպուրականի նահանգի Նախճավան եւ Գողթն գավառները ու պատկանել է Հայոց նախարարական տներին, որոնք այն կառուցապատել են ամրակուռ բերդերով ու ամրոցներով: Այստեղ են ստեղծվել ու պահպանվել հայ բանահյուսության հնագույն նմուշները՝ Գողթան երգերը: Իսկ երբ Հայաստանում 301 թ. քրիստոնեությունը հռչակվում է պետական կրոն, Գրիգոր Լուսավորիչն ու Տրդատ թագավորը առաջինն այս տարածքի հայությանն են ներգրավում նոր հավատքի ոլորտ: Նույնիսկ Մեսրոպ Մաշտոցը, որ գրերի գյուտից առաջ իր գործունեության հիմնական վայր էր ընտրել Գողթն գավառը, գրերի ստեղծումից անմիջապես հետո այստեղ է դպրոցներ բացել ու հայոց գիրն ու դպրությունը տարածել: Թեւ դարեր շարունակ քաղաքական, վարչական ու տնտեսական տարբեր իրավիճակներ է ապրել Նախիջեւանի երկրամասը, այն իր ազգային դիմագիծը երբեք չի փոխել: Նրա տարածքում հիմնադրվել են բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ, գրչության օջախներ ու դպրոցներ, որոնք մեծ դեր են կատարել հայ գրականության ու մշակույթի զարգացման գործում եւ հայ գիտությանն ու դպրությանը տվել են անվանի գործիչներ:

Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միավորվելուց հետո Նախիջեւանի երկրամասը 1828թ. իր գավառների եւ Օրդուբադի շրջանի հետ մտել է Հայկական մարզի, հետագայում՝ Երեւանի նահանգի մեջ, իսկ 1918-1920 թթ. պատկանել է Հայաստանի առաջին Հանրապետությանը: Սակայն Անդրկովկասում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո՝ 1923 թվականին, նրա տարածքը ապօրինի կերպով բռնակցվել է Ադրբեջանին: 1924 թվականից ԱդրԽՍՀ կազմում նրան տրվել է Նախիջեւանի ԻԽՍՀ կարգավիճակ: Խորհրդային Միության փլուզումից հետո, այն 1991թ. օգոստոսից կրում է Նախիջեւանի Ինքնավար Հանրապետություն անվանումը՝ դարձյալ Ադրբեջանի կազմում:

Խորհրդային կարգերի գոյության 70 տարիների ընթացքում Ադրբեջանի ղեկավար մարմինները ամեն ինչ արել են, որպեսզի հայոց այդ օրրանը հայաթափվի՝ յուրացնելով հայ ազգաբնակչության հողը, ունեցվածքը եւ հոգեւոր հարստությունները, փակելով դպրոցներն ու մշակութային օջախները, քանդելով ու ավերելով պատմական հուշարձանները: Այդ մասին չի գրվել: Արդյունքում ԽՍՀՄ-ի լուծարումից հետո այնտեղ ոչ մի հայ չէր մնացել:

Նախիջեւանի մասին, որքան էլ զարմանալի թվա, անցած 70 տարիների ընթացքում չէր ստեղծվել գիտական գրականություն, չէին գրվել գրքեր, եղածներն էլ գրվել էին օտարների ու ազերիների կողմից՝ շրջանցելով պատմական իրողությունը: Խորհրդային կարգերի գոյության վերջին տարիներին Նախիջեւանի մասին առաջինը համարձակություն ունեցավ հոդվածներ ու գրքեր հրատարակել մշակութաբան Արգամ Այվազյանը: Նրա հեղինակած «Նախիջեւանի պատմաճարտարապետական հուշարձանները» (1978 թ.) եւ «Նախիջեւանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները» (1987 թ.) նկարագրդ մատյանները այդ երկրամասի բնակավայրերի ու պատմաճարտարապետական հուշարձանների գիտական ուսումնասիրության հիմքը հանդիսացան: Այդ ընթացքում եւ դրանից հետո տպագրվեցին նրա «Ագուլիս», «Ջուղա», «Գինեւէտ Գողթն» եւ այլ գրքեր ու ալբոմներ: Իսկ 2004 թվականից ի վեր տպագրվում է Ա. Այվազյանի կազմած «Նախիջեւանի վիմագրական ժառանգությունը» խիստ արժեքավոր բազմահատորյակը:

Վերջերս լույս է տեսել Ա. Այվազյանի գրական էսսեների եւ ուղեգրությունների «Նախիջեւան» ստվարածավալ հատորը[1], որը նրա բազմամյա հետազոտական աշխատանքի արդյունքներն ամփոփող մի մնայուն մատյան է՝ գիրք ընդհանրական: Դեռ դպրոցական տարիներից Ա. Այվազյանը նվիրվել է հայրենի Նախիջեւանի տեղանքի ու պատմաճարտարապետական հուշարձանների ուսումնասիրության գործին: Ինչպես ժողովուրդն է ասում, նա, զանց առնելով ամեն մի դժվարություն, մեղվի ջանասիրությամբ հետազոտել է հայերեն ու օտարալեզու հին ու նոր գրքերը եւ դրանց էջերից հանել այն ամենը, ինչ վերաբերել է հայրենի եզերքի պատմությանն ու մշակույթին: Այդ ամենն իր աչքով տեսնելու եւ ձեռքով շոշափելու նպատակով նա ոտքով անցել է հինավուրց երկրամասի ամբողջ տարածքով: Սույն հատորը կարդալով՝ ակամա մտածում ես, թե նա մեն-մենակ ինչպես է կարողացել ամեն վայրկյան սպասվող վտանգների ու արգելքների, ադրբեջանական սպառնալիքների ու սադրանքների պայմաններում ուսումնասիրել ողջ երկրամասի ամեն մի ձորն ու լեռը, արահետն ու կածանը, քարն ու թուփը, խուչն ու խութը եւ ի հայտ բերել ու նկարագրել դրանցում թաքնված պատմաճարտարապետական հարյուրավոր հուշարձանները՝ փոքր մատուռների անմշակ քարերից սկսած մինչեւ կիսավեր վանքերի նրբակերտ խաչքարերն ու խոնարհված եկեղեցիների գունաթափ որմնանկարները, կամուրջներն ու իջեւանատները, շիրմաքարերն ու դրանց վրայի մամռապատ ու հաճախ եղծված տապանագրերը, գետնամած մյուս կոթողներն ու վիմագիր արձանագրությունները:

Դրանք այդ հողի վրա մեր ինքնությունը հաստատող քարե վավերագրեր են, որ հազարամյակներ շարունակ կերտվել են հայ մարդու ձեռքով ու սրբագործվել Մեսրոպյան գրերով: Նոյ նահապետի այստեղ իջեւանելու պահից մինչեւ Ի դարի սկիզբը Նախիջեւան աշխարհը համարվել է պատմական Հայաստանի հուշարձանախիտ վայրերից մեկը, ուր ստեղծված ու կառուցված ամեն մի բերդ ու ամրոց, քաղաք ու գյուղ ի սկզբանե կրում են միայն ու միայն հայկական կնիք: Այստեղ պահպանված հուշարձանները, որոնց կյանքը վաղուց վտանգի տակ է, չորս տասնամյակ շարունակ ուսումնասիրել, չափագրել ու նկարագրել,

1 **Արգամ Այվազյան**, Նախիջեւան, գրական էսսեներ, հետազոտման ուղեգրություններ, Եր., հեղինակային հրատարակություն, 2007, 696 էջ + 104 էջ ներդիր: Սույն գրքից կատարված մեջբերումների էջերը նշում ենք շարադրանքի հետ, փակագծերի մեջ:

լուսանկարել ու կինոժապավենի է վերածել Ա. Այվազյանը: Նրա այդ անձնվեր աշխատանքի շնորհիվ է, որ դրանք առանձին գրքերի ու ալբոմների են վերածվել ու ներկայացվել ինչպես հայ, այնպես էլ միջազգային հանրությանն ու մասնագետներին:

Այս առումով տեղին է հիշել ակադ. Վարազդատ Հարությունյանի գնահատականի խոսքը. «Երեւի Հայաստանի ոչ մի պատմական շրջանը այնպիսի հարուստ գրականություն չունի, ինչպիսին Նախիջեւանը, - գրում է նա: - Դրա համար մենք պարտական ենք մեծ հայորդի, հայրենասեր Արգամ Այվազյանին: Այն, ինչ կատարել է Ա. Այվազյանը, կատարյալ սխրանք է: Նրա կատարածը մի ամբողջ գիտահետազոտական ինստիտուտի աշխատանք է, բայց կատարել է միայն ինքը, հայրենասեր հայորդի Ա. Այվազյանը» (էջ 617):

Ա. Այվազյանի ներկա մենագրությունը, որ հեղինակի կյանքի ու գործունեության պատմությունն է, մեկ առ մեկ ներկայացնում է այդ հուշարձանների պատմագիտական, հնագրագիտական, ազգագրական, վիմագրագիտական կենսագրությունը եւ դրանց արվեստագիտական ու մշակութաբանական արժեքները: Գրքում ներկայացված են Ջուղայի, Ագուլիսի, Գողթնի, Որդուարի, Ցղնայի, Փառակայի, Շահապոնքի, Երնջակի, Օձոփի, Ճահուկի, Բիստի, Գոմերի, Ազնաբերդի, Ասպապատի, Շարուրի, Նախիջեւանի եւ տասնյակ այլ բնակավայրերի հուշարձանների նկարագրությունները: Հեղինակն այդ ամենը ներկայացնում է գիտական պատշաճ մակարդակով ու հարուստ լեզվով, տեղ-տեղ իր խոսքին տալիս գեղարվեստական երանգավորում: Սակայն իր անձին անդրադառնալիս խոսքը համեստ է, առանց գունազարդումների ու ավելորդաբանությունների: Երբ կարդում ես այդ էջերը, ասես հեղդ զրուցում է հեռավոր լեռնաշխարհից եկած մի անաղարտ պատանի եւ ոչ թե երկու տասնյակից ավելի ծանրակշիռ գրքերի ու մենագրությունների հեղինակ արվեստագետ - գիտնականը: Այս գրքի ուժն ու գեղեցկությունը, համն ու հոտը նաեւ դրա մեջ է: Յուրաքանչյուր ընթերցող, առավել եւս մասնագետ ընթերցող, նրա էջերում շատ օգտակար խորհուրդներ կարող է գտնել, թե ինչպես պետք է հետազոտել հայրենի բնակավայրերն ու հուշարձանները:

Աշխատությունն ունի ընդարձակ հավելված, ուր ներառված են հատվածներ Ա. Այվազյանի հեղինակած գրքերի ու ալբոմների մասին մամուլում հրապարակված նշանավոր մարդկանց գրախոսություններից ու գնահատականի խոսքերից, գիտության ու մշակույթի անվանի գործիչների՝ հեղինակին հասցեագրված նամակներից: Ավելորդ չենք համարում այստեղ թվարկել նրանցից մի քանիսի անունները՝ ակադեմիկոս Լ. Խաչիկյան, գիտությունների դոկտորներ Ա. Աբրահամյան, Բ. Ուլուբաբյան, Մ. Հասրաթյան, Դ. Քերթմենջյան, Ա. Ջաքարյան, Գ. Գրիգորյան, Կ. Քարամյան, Ռ. Մաթեւոսյան, Ս. Հարությունյան, Ա. Քալանթարյան, Պ. Մուրադյան, գրողներ ու արվեստագետներ Հ. Իսաբեկյան, Հ. Հակոբյան, Ռ. Մարուխյան, Ե. Մանարյան, եւ շատ ուրիշներ: Օրինակ՝ նրանցից մեկը՝ արվեստագետ Շահեն Խաչատրյանը գրում է. «Դժվար է գնահատել այն հսկայական աշխատանքը, որը կատարել է Արգամ Այվազյանը, մի մարդ, որը մի ամբողջ կյանք ներդնելով կարողացել է յուրովի, ամենայն ջանասիրությամբ վերաստեղծել իր հայրենի բնաշխարհը իր բազում հուշարձաններով, խաչքարերով, հոգեւոր արժեքներով: Մեր ժողովուրդն ունի 7-րդ զգայարանի նման մի հատկություն, որից ծնվում են այնպիսի մարդիկ, որոնք իրենց շալակն են առնում այն կարեւորը, այն պատմականն ու անդառնալին,

որը հանդիսանում է մայր հողն ու մշակույթը: Ահա այսպիսի մշակ ու գիտնական է Արգամ Այվազյանը, որի անունը ծանոթ է շատ շատերին» (էջ 619):

Հավելվածի «Նամակներ» բաժինը ևս հարուստ է տարբեր երկրներից ու քաղաքներից ուղարկված անվանի մարդկանց (Ա. Յակոբսոն, Պաոլո Կունեո, Գ. Ուլուհոճյան, Ա. Հախնազարյան, Հովհ. Խալփախչյան, Լ. Ստեփանյան, Կ. Դերեպյան, Ե. Ազատյան, Գ. Գեոնյան, Իգոր Բաբանով եւ այլք) գրություններով ու նամակներով, որոնք, բարձր գնահատելով Ա. Այվազյանի աշխատանքը եւ նրա հեղինակած գրքերն ու հոդվածները, միաժամանակ Նախիջեւանի անհետացող հուշարձանները ներկայացնում են աշխարհին ու դատապարտում դրանք ոչնչացնելուն միտված թուրք - ազերիների վայրագություններն ու ոճրագործությունները:

Հավելվածն ընդգրկում է նաեւ Ա. Այվազյանի ցարդ հրատարակած աշխատություն-ների մատենագիտական ցանկը, ինչպես նաեւ այդ հրատարակությունների եւ հեղինակի գիտական գործունեության մասին պատմող Հայաստանի, Սփյուռքի եւ արտերկրի մամուլի էջերում տպագրված նյութերի ցուցակը: Գիրքն ավարտվում է լուսանկարների հարուստ բաժնով, ուր ներկայացված է 259 նկար՝ սկսած իր ծննդավայր Արինջ գյուղի համայնապատկերից ու ողջ երկրամասում սփռված անզուգական հուշարձանների պատկերներից մինչեւ արտասահմանյան ուղեւորությունների ու գիտաժողովների դրվագներն ու հայտագրերի վերապրությունները, որոնք ունեն պատմաճանաչողական կարեւոր նշանակություն եւ արժեք:

Այստեղ, վկայակոչելով Հովհ. Թումանյանի այն խոսքը, թե՝ «Դեռ շատ պատմական տեղեր մեր հայրենիքում մնացել են անհայտ ոչ միայն գիտական աշխարհին, այլ մեր գրագետներին», ուզում ենք ավելացնել, որ Ա. Այվազյանի ներկա գիրքը Նախիջեւանի «անհայտը» գրեթե ամբողջությամբ ներկայացնում է հանրությանը: Նախիջեւանը նյութական մշակույթի մի հարուստ թանգարան է, հոյակերտ կոթողների մի անզուգական պատկերասրահ՝ բաց երկնքի տակ, որը, զուտ հայկական լինելով, մասն է կազմում ողջ մարդկության մշակութային գանձարանի:

Այսօր ժամանակի դաժան հարվածներին դիմակայած այդ հուշարձանները, որպես հայկական հետքեր, հեռահար նպատակներով ու մշակված ծրագրերով ոչնչացվում են բարբարոս թուրք ազերիների կողմից:

Դրա դեմ պայքարելու համար սույն աշխատության նման գրքեր եւ Ա. Այվազյանի պես բանիմաց ու նվիրյալ հետազոտողներ մեզ շատ են պետք:

ՎԱՀԱՆ ՄԱՂԱԼՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու